№ 227 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 30 1878 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 30 № 227

ԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։

Թիֆլիսում գրվում են Մելիքյան խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція „Мшакъ“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մեր անցեալ գործունէութիւնը։—Ներքին տեսութիւն։ Դատաստանական պրակտիկա Անդրկովկասում։ Նամակ Քութայիսից։ Նամակ Բագուից։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Նամակ Գերմանիայից։—«Մշակի» հեռագիրներ։ — Յայտարարութիւններ։—Բանասիրական։ Սուրբ Վլադիմիրի մանկական հիւանդանոց Մոսկվայում։

ՄԵՐ ԱՆՑԵԱԼ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

—

Եօթ տարի է արդէն որ «Մշակը» գոյութիւն ունի. շուտով սկսվելու է ութերորդ տարին։

Ի՞նչ արաւ մեր լրագիրը այդ եօթ տարվայ ընթացքում,—թող դատեն այդ մասին ապագայ սերունդները, թող գնահատեն, եթէ մեր գործունէութեան մէջ գնահատելու բան կար, թող պարսաւեն, եթէ «Մշակի» կատարած գործը արժանի էր պարսաւանքի։

Մենք միայն մի բան գիտենք. գուցէ մինչև այժմ հրատարակված հայ լրագիրներից և ամսագիրներից ոչ մինը չունեցաւ այնքան թշնամիներ և մի և նոյն ժամանակ այնքան բարեկամներ, որքան «Մշակ» լրագիրը։

Նրանք, որոնք կարդում են մեր թերթը և կարդում էին նրան եօթ տարի շարունակ, կամ «Մշակի» սաստիկ բարեկամներ են դառնում, կամ նրա կատաղի անհաշտ թշնամիներ....

Ընտարբերները դէպի «Մշակը» միայն նրանք են, որոնք բոլորովին չեն կարդում մեր լրագիրը։

Հաւատարիմ կուսակիցներ և անհաշտ թշնամիներ,—ահա՛ ինչ ծայրայեղութիւններ են ներկայացնում մեզ մեր լրագրի ընթերցողները։ Նրանք, որոնք անտարբեր են, նրանք մեր ընթերցողներ երբէք եղած չեն....

«Մշակի» հետ ծանօթ հայը կամ խօսում է սաստիկ ոգևորված կերպով այդ լրագրի մասին, կամ խօսում է նրա մասին կատաղաբար, փրփուրը բերանին։ «Մշակը» եօթ տարի շարունակ կարդալ և նրա մասին անտարբեր ոգով խօսել,—դա անհերևակայելի է։ Հայ ընթերցողը կամ սաստիկ համակրում է մեր թերթին, կամ սաստիկ, անզսպելի կերպով ատում է նրան։

Այդ տեսակ երևոյթ շատ մրխիթարական է և ապացոյց է որ այդ թերթի մէջ կեանք կար, որ նրա մէջ հաստատ, որոշ ուղղութիւն կար, որ նա ժամանակի պահանջին համապատասխան էր, որ նա յարուցանում էր այնպիսի խնդիրներ, որոնք չէին կարող չը հետաքրքրել, չը յուզել հայոց հասարակութիւնը, չը շարժել նրա բոլոր կրքերը....

Պատահել են, այո՛, և այնպիսի փաստեր, որ «Մշակի» սաստիկ կուսակիցներ դարձել են նրա անհաշտ, կատաղի թշնամիներ, պատահել է, ընդհակառակն որ թշնամին յանկարծ ջերմ համակրող, անսահման պաշտպան էր դառնում,—բայց երբէք չէ պատահել որ մեր բարեկամներից մինը մեզանից հեռանալով, սկսեր անտարբեր վերաբերվել դէպի մեր լրագիրը, երբէք չէ պատահել որ մեր թշնամին դադարեր յանկարծ մեր թշնամի լինելուց, մոռանար իր անցեալ թշնամութիւնը և անհոգ ու անտարբեր ոգով վերաբերվեր դէպի «Մշակը»։

Ոչ, «Մշակը» կարող է միայն կամ սաստիկ թշնամիներ, կամ սաստիկ բարեկամներ ունենալ։

Դա մխիթարական երևոյթ է, ասացինք մենք, որովհետև միայն դէպի աննշան և ինչին գործեր մարդիկ անտարբերութեամբ են վերաբերվում, իսկ ծայրայեղ կուսակցութիւններ՝ անպայման թշնամիներ, կամ ան-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՍՈՒՐԲ ՎԼԱԴԻՄԻՐԻ ՄԱՆԿԱԿԱՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

—

Համաշխարհային հաղթում, Ռուսաստանի երկրորդ խմբի բաժնում (Отдѣленіе второй группы) գտնվում էին մի օրինակ և մի մակարդակ Ս. Վլադիմիրի մանկական հիւանդանոցի, որ հիմնել և բացել էր 1876 թուին Մոսկվայի բժիշկ պ. Բաուխֆուս։ Այս բժշկին պատկանում է Մոսկվայի և Ս. Պետերբուրգի երկու մանկական մեծ հիւանդանոցների հիմնարկութեան գործը։ Երկուսն էլ հիմնված են գիպչողական (վարակիչ) ախտերով հիւանդների միմիանցից առանձնացնելու պրինցիպի վրա (принципъ изолированія)։

Դեռ անցեալ տարի փարիզի գիտնական ակադեմիայի կոմիսարները, որոնք ընտրված էին հին «Hôtel-Dieu» հիւանդանոցի տեղ չորս նոր հիւանդանոցների նախագիծ կազմելու, բացատրում էին հիւանդների համար մասնաւոր զետեղումների անհրաժեշտութիւնը։ Նրանց նպատակը, յայտնի բան է, պէտք է լինէր առաջն առնել տարափոխիկ հիւանդութիւնների զօրանալուն.

Աւելի էլ կարևոր է այդ պրինցիպի իրագործելը մանկական հիւանդանոցների մէջ, որովհետև հակառակ դէպքում այդ տեսակ հիմնարկութիւններ դառնում են ժանտախտի կենտրոններ, որոնք սպառնում են ամբողջ ազգաբնակութեանը....

Վերև յիշված մտքին և նոյնպէս բժիշկ Բաուխֆուսի նախագծին համաձայն հիմված է Ս. Պետերբուրգում Օլդենբուրգեան իշխանի հիւանդանոցը, որ ունի 262 անկողին, ընդունում է ամեն տարի մօտաւորապէս 16,000 հիւանդ և օգնութիւն է հասցնում եկողներին (երթևեկներին), որոնց թիւը հասնում է մինչև 5000 հոգի։

Վարակիչ հիւանդութիւնների առանձին սենեակներ մի մէջ բաժանելու սիստեմը իրագործված է նոյնպէս և այդ հիւանդանոցում և կային դէպքեր երբ աջողվում էր ոչ թէ միայն սահման դնել տարածվող ախտին, բայց և կատարելապէս դադարեցնել հիւանդութիւնը։ Իր փորձից օգուտ քաղելով բժիշկ Բաուխֆուս աշխատեց նոր հիւանդանոցին այնպիսի կազմակերպութիւն տալ, որ անհնարին անէր ախտի զարգանալը։

Մոսկվայի Սուրբ Վլադիմիրի մանկական հիւանդանոցը կառուցված է 400 հազար գումարի ծախսով, որ նուիրած է քաղաքին Պ. Ֆոն-Դերվիզ ի յիշատակ իր մանկահասակ զաւակների։ Քաղաքային վարչութիւնը ընծայեց գետինը շինութեան համար և պարտաւորվեցաւ տարեկան 60 հազար ռուբլ ծախսել հիւանդանոցի պահպանութեան համար։

Նուիրատուն յայտնեց իր ցանկութիւնը, որ այդ հիմնարկութիւնը կազմակերպվի նոյն պրինցիպի վրա, ինչպէս հիմված է Ս. Պետերբուրգի հիւանդանոցը։ Եւ նախագիծը գրվեցաւ Բաուխֆուս բժշկի ձեռքով։ Հիւանդանոցը կառուցված է քաղաքից դուրս գտնվող մի բարձրութեան վրա։ Քաղաքից ընծայած գետնի տարածութիւնը 133,449 քառակուսի մէտր է։ Այդպիսի տարածութեան գետնի վրա հնարաւոր էր շինել մէկ շինութեան տեղ, միմեանցից հեռու գտնված չորս երկույարկանի շինութիւններ, որանցից իւրաքանչիւրը նշանակված լինէր հետևեալ չորս վարակիչ ախտերի համար՝ սկարլատին, կարմրուկ, ծաղիկ և դիֆտերիտ։

Երթևեկ հիւանդների ընդունելութիւնը կարգաւորված է առանձին բաժնում, իսկ գլխաւոր շէնքը բաղկացած է բաժիններից և առանձին սենեակներից, որոնք դասաւորված են միացնող կօրիդօրի երկայնութեամբ։

Գլխաւոր շէնքի իւրաքանչիւր թևը ունի 16 անկողին և յայտնի ախտի երևալուն պէս, կարող է բոլորովին բաժանված լինել շինութեան կենտրոնական մասից։ Եթէ վերև յիշված չորս հիւանդութիւններից մինը յայտնվեցաւ, հիւանդին տեղափոխում են չորս մասնաւոր ֆլիգելներից մինը, իսկ գլխաւոր շէնքի թևերը կարող են առանձնացած լինել, որովհետև շինութիւնը բաժանված է չորս մասի վրա և իւրաքանչիւր մասը ունի առանձին մուտքեր դէպի այգի, առանձին աւազաններ և առանձին արտաքնոցներ։

Այսպիսով հիւանդութիւնների կատարեալ առանձնանալը իրագործվում է միայն շինութեան չորս թևերի մէջ, որոնք նշանակված են ամենավարակիչ հիւանդութիւնների բժշկութեան համար։ Ծաղիկի և դիֆտերիտի բաժինները փայտեայ շինութիւններ են և վերջինը ունի մասնաւոր բաժին բաղադրեալ և կասկածաւոր հիւանդների համար, որոնց ճշդութեամբ որոշելը սկզբից դժուարութիւն է ներկայացնում։ Կան նոյնպէս 3 սենեակներ կարանտինի համար։

Այսպիսի համակարգութեան շնորհով երկու տարվայ ընթացքում Ս. Վլադիմիրի հիւանդանոցը հասաւ իր գլխաւոր նպատակին, այն է, որ վարակիչ ախտերը չը տարածվեն հիւանդանոցի մէջ գտնված ուրիշ երեխաների մէջ։ Բաւական էր միայն դռները փակել, տեղափոխել հիւանդին նրա համար նշանակված բաժինը և գործ դնել կարանտին բոլոր կասկածաւոր դիպուածներում,—և մտադրված նպատակը իրագործվում էր։ Ի հարկէ հարկաւոր է հիւանդանոցի մէջ ծառայողների բաւական մեծ քանակութիւն ունենալ։

Բ. Բաուխֆուս բացատրում է, որ մանկական հիւանդանոցների մէջ տարափոխիկ ախտերի միմիանցից առանձնացնելը կենսական խնդիր է։ Բացի սորանից փորձը ցոյց տուեց, որ մինչև անգամ բժիշկների, գթութեան քոյրերի և դայակների համար էլ աւելի յարմար է հոգալ մի քանի հիւանդների մասին կարանտինի սենեակներում, կամ զգուշութեամբ պահպանել նրանց և իրանց անձը պահպանել ուրիշ հիւանդներից, քան թէ պատահել հիւանդանոցներում այնպիսի ախտերին, որոնց դէմ անզօր են գթութեան և գիտութեան բոլոր ջանքերը։

«Այս մշտական պատերազմը թշնամու դէմ, ասում է Բ. Բաուխֆուս, աւելի եռանդ է պահանջում, աւելի շուտ է յոգնեցնում, քան թէ ճիշտ կատարումն այն կարգադրութիւնների, որոնցից գլխաւորն է փակել դռները ախտի մտնելուն պէս։»

Երևելի մասնագէտի կարծիքով ահա այն գլխաւոր desiderata, որին պէտք է ձգտել մեծ քաղաքներում հիւանդ երեխաների հասարակական հոգատարութեանը հասնելու համար։

1) Քաղաքի զանազան թաղերում պէտք է հիմնվեն բժշկական կայարաններ եկող հիւանդներին օգնութիւն տալու համար, դեղանոցներով, կարանտինի սենեակներով և այլն։

2) Պէտք է լինեն կառքեր հիւանդ երեխաներին կայարանից մինչև հիւանդանոցներ տեղափոխելու համար։ Այս վերջինները պէտք է գտնվեն քաղաքից դուրս և նրանց որքանութիւնը համեմատ պէտք է լինի ազգաբնակութեան թուին։

Ի հարկէ հիւանդանոցները պէտք է շինվեն այնպէս, որ ճշդութեամբ կատարեն դիպչողական հիւանդութիւնները միմեանցից բաժանելու բոլոր կարգադրութիւնները։ Անկողինների թիւը 250-ից աւելի չը պէտք է լինի։ Բնակիչների իւրաքանչիւր հազարի վրա բաւական է մի հիւանդ մանուկի անկողին և իւրաքանչիւր հազարի վրա երթևեկների թիւը կարելի է որոշել 150 հոգի։

3) Վերջապէս անհրաժեշտ են հիւանդանոցին կից ապաստանարաններ առողջացողների համար։

Վերջացնելով մեր այս նկատողութիւնը, նոյն իսկ բժիշկ Բաուխֆուսի բացատրութենից քաղած, մենք մեզ թոյլ կը տանք հաստատել, որ պ. բժշկի անձնական հոգսերը յիշված մանկական մեծ հիւանդանոցների հիմնելու համար, քիչ չը նպաստեցին նոյն իսկ այդ հիմնարկութիւնների իրագործելուն։

Մենք ուրախ կը լինէինք, եթէ մեր մէջ էլ գտնվէին մարդիկ, որոնք պատրաստ լինէին գումարներ նուիրել փոքրիկ մարտիրոսների փրկութեան գործի համար։

Չենք կարող չարտայայտել և մեր համակրութիւնը յարգելի մասնագէտին, որ նուիրեց իր բոլոր հոգսերը մանկական հիւանդանոցների Ռուսաստանի մէջ իրագործելուն, այդ գործի խելացի սկզբունքների վրա հաստատելուն և որին արդէն աջողվեց տալ այդ օգտաւէտ և մարդասիրական գործին հաստատուն հիմք և ընդարձակ զարգացում։

Օրիորդ Բ—եան

պայման բարեկամներ յարուցանող ձեռնարկութիւնը միշտ ցոյց է տալիս որ ունի իր մէջ մի ներքին, անգիտակցական ոյժ, ունի կեանք, ունի ապագայ։

Թող բազմանան, ուրեմն, մեր թշնամիները, — մենք նրանցից չենք վախենում։ Ընդհակառակն մեր թշնամիների բազմանալը ամենահաստատ գրաւական կարող է լինել մեր գործի ապողութեան համար, որովհետև որքան կը բազմանան մեր թշնամիները, այնքան կը բազմանան և մեր բարեկամները։

Ուրեմն այսուհետև էլ մենք շարունակելու ենք մեր գործունէութիւնը նոյն ձևով և նոյն ուղղութեամբ, ինչ ձևով և ուղղութեամբ տարել ենք այդ գործունէութիւնը եօթ տարի շարունակ։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ.

Ս. Պետերբուրգի երդուեալ հաւատարմատար Սպասովիչ Անդրիեվսկու գործի պաշտպանութեան ժամանակ յայտնեց մի միք, որի հետ չէ կարելի կատարելապէս համաձայնվել։ Դատապարտել մեղադրվածներին միմիայն նրանց արած յանցանքի մասին իրողութիւններ հաւաքելուց յետոյ, առանց հետազօտելու և բացատրելու յանցանքի մօտիվը, շարժառիթը, անարդար է Սպասովիչի կարծիքով։

Մենք այդ կարծիքի հետ համաձայն չենք։ Այո, շատ լաւ կը լիներ, եթէ ամեն յանցանքի մէջ գտնվէին մօտիվներ, շարժառիթներ։ Բայց շատ անգամ այդ անհնարին է լինում անելու։ Մարդու սիրտը, մարդու զգացմունքները, նրա ուղեղի գործակատարութիւնը, նրա կրքերը անմեկնելի, գաղտնի, անբացատրելի, անթափանցելի են։ Դատաստանական քննութիւնը և դատաստանական բժշկականութիւնը եթէ անպատճառ ուզենային իւրաքանչիւր յանցանքի մօտիվները գտնել, —գուցէ շատ քիչ յանցանքներ ենթարկված կը լինէին դատարաններին և յանցանքների մեծ մասը անպատիժ կը մնային։

Իւրաքանչիւր յանցանքի քննութեան մէջ պահանջվում է, որ թէ դատաստանական նախնական քննութիւնը և թէ դատաստանական բժշկականութիւնը ճշգրտութեամբ հետազօտէին իրողութիւնները, ուսումնասիրէին գործին վերաբերեալ բոլոր հանգամանքները, հաստատէին փաստերը, միմիանցից անկապ փաստերի մէջ վերականգնեցնէին ներքին, պատճառական կապ,—և այդպիսով միջոց տային դատարանին յայտնել իր վճիռը։ Եթէ քննութիւնը ճիշտ կերպով է կատարված, եթէ յանցանքի իրողութիւնը ապացուցված է,—այն ժամանակ կարելի է և անտես առնել յանցանքի շարժառիթը, մանաւանդ որ մարդու սրտի ներքին շարժումը, մարդու հոգեկան տրամադրութիւնը, որ ծնեցնում է մարդու այս կամ այն գործողութիւն, թելադրում է մարդուն մի յայտնի յանցանք գործելու, շատ անգամ անմատչելի է լինում որ և է ճիշդ հետազօտութեան։

Բայց այդ դիպուածում, կրկնում ենք, դատաստանական և բժշկական քննութիւնը պէտք է ամենաճշգրիտ կերպով կատարված լինեն։

Բայց ի՞նչ կասէք, երբ որ ոչ մօտիվներ են գտնված, ոչ էլ դատաստանական և բժշկական քննութիւններ են արած...Այն ժամանակ դատապարտել մեղադրվածին, մեր կարծիքով, ուրիշ բան չէ, եթէ ոչ կատարեալ կամայականութիւն։

Նորերումս Թիֆլիսի Նահանգական դատարանի մէջ քննվեցաւ հետևեալ գործը։ Փօթիում բնակվող մի յոյն կին գանգատ է տուել դատարանին որ նա բռնաբարված է եղել իր իմերել խոհարարից։ Գործի մէջ չը կար ոչ դատաստանական ճիշդ քննութիւն, ոչ էլ ամենափոքրիկ նշոյլ բժշկական քննութեան։

Եւ այնու ամենայնիւ խոհարարը դատապարտվեցաւ տաժանակիր աշխատանքներին։ Վճիռը կայացաւ կնոջ ցուցման, նրա մարդու և հարևանների վկայութեան վրա։ Կնոջ ցուցումները, մարդու և հարևանների վկայութիւնները կարող էին սուտ լինել։ Հարկաւոր կը լիներ, ուրեմն, այստեղ էլ քննել շարժարիթները։ Բայց ի՞նչ հնար կայ նրանց քննելու...Չէ՞ կարող, միթէ, պատահել, որ կինը չուզենալով վճարել խոհարարին իր ռոճիկը, գործ դրեց բամբասանք, որպէս միջոց նրան հեռացնելու...

Առհասարակ մարդու ներքին աշխարհը, նրա գործողութիւնների մօտիվները անշօշափելի են. դրանց դժուար է ենթարկել որ և է ճիշդ հետազօտութեան և քննութեան։

Քրէական յանցանքների ճիշդ քննութեան ամենահաստատ գործիչները՝ դատաստանական և բժշկական քննութիւններն են։ Նրանց օգնութեամբ կարելի է միայն գտնել յանցանքի հետքերը և հաստատել յանցանքի իրողութիւնը։

Իսկ այդ գործիչները մեր անդրկովկասեան դատաստանական պրակտիկայի մէջ ամենաթոյլ կողմերն են։ Իւրաքանչիւր պրոցէսի մէջ մեզանում յայտնվում է նրանց թոյլ, պակասաւոր լինելը, նրանց անկատարելութիւնը։ Քանի գնում է, տարի և տարի, պահանջ է զգացվում բարձրացնել մեր երկրում դատաստանական քննութեան նշանակութիւնը, կատարելագործել մեզ մօտ դատաստանական բժշկականութեան պրակտիկան։

Գ. Ա.

ՆԱՄԱԿ ՔՈՒԹԱՅԻՍԻՑ

Դեկտեմբերի 27

Մէկ էլ օր գնացի այստեղի հայոց եկեղեցի։ Ժամասացութիւնը ինձ վրա շատ լաւ տպաւորութիւն ունեցաւ. բացի տղաներից սեղանի առջև երգում էր և մի խումբ օրիորդների։ Դրանք այստեղի հայոց ուսումնարանի աշակերտուհիներն են։ Իսկ երէկ ինձ աջողվեց գնալ այստեղի բողոքականների աղօթատուն։ Այստեղի սակաւաթիւ բողոքականները չունեն իրանց համար առանձին աղօթատուն, բայց այստեղի ռուսաց տարրական ուսումնարանի վարժապետը, որ ինքն բողոքական է, տօն օրերին հաւաքում է ուսումնարանի սենեակներից միսի մէջ Քութայիսի բողոքականների փոքրիկ համայնքը, բոլորը միասին երգում են սաղմոսներ, երգեցողութեանը ուղեկցում է հարմոնիում անուանված երաժշտական գործիքի վրա վարժապետի որդին, մի տասներկու, կամ տասներէք տարեկան պատանի։ Յետոյ ինքն վարժապետը մի կարճ քարոզ է ասում, բացատրելով աւետարանի այս կամ այն տեղը, այս կամ այն խօսքը։ Ես շատ հաւանեցի նրա հասարակ, համեստ և սրտաշարժ քարոզը։ Ակամայ սկսեցի մտածել մեր հայոց լուսաւորչական եկեղեցիների մասին։ Ինչի՞ մեզանում չը կան այդքան խելացի զգացմունքով լի և մի և նոյն ժամանակ համեստ քարոզներ ասող հոգևորականներ.... Մեր քահանաները անկիրթ մարդիկ են, աւելի անկիրթ քան թէ նոյն իսկ իրանց ծուխը։ Երբ կը լինի որ հայ քահանան ճշմարիտ կրթված մարդ կը լինի.... Այդ այն ժամանակ կը լինի, երբ հայ քահանան հաստատ ռոճիկով ապահովված կը լինի։ Ո՞ր կրթված մարդ կը համաձայնվի քահանայ դառնալ, ուրեմն պսակվել և ընտանիք ունենալ և ապահովված չը լինել գոնէ մի փոքրիկ, բայց հաստատ ամսական եկամուտով։ Ամբողջ ընտանիքով ապրել, քահանայական ծառը պաշտօն կատարել և մի և նոյն ժամանակ ոչինչ հաստատ եկամուտ չունենալ և մուրացկանութեամբ ապրել,—այդ տեսակ քայլն անելը մեզանից ոչ ոք չի համաձայնվի։

Երէկ երեկոյեան կար նահանգապետի տան մօտ գտնվող մի մասնաւոր տան դահլիճում սիրողների մի ներկայացում ռուսերէն լեզուով։ Խաղում էին Դիլէնկոի «Блестящая партія» դրամա։ Դահլիճը բաւական ընդարձակ է և լի էր հասարակութեամբ, բայց տան մուտքը և կորիդօրները այնպէս նեղ են, որ գրեթէ անհնարին էր շարժվել դահլիճից դուրս գալու կամ մտնելու ժամանակ։ Ներկայացումը շատ վատ էր գնում, ես միայն մի գործողութիւն տեսայ և շուտով փախայ։ Աւելի լաւ չէր լինի եթէ սիրողները ընտրէին տեղական կեանքից մի պիէսա և ներկայացնէին նրան վրա լեզուով։ Ճշմարիտ է սիրողների մեծ մասը ռուսներ էին, բայց այնու ամենայնիւ Մոսկվայի կեանքից վերցրած պիէսան, իր բոլոր ռուսաց տիպերով, կատարելապէս անճոռնացած էր և տեղական գոյն էր ստացել։ Լաւ է բոլորովին չը խաղալ, քան թէ այդ տեսակ պիէսաներ այս ձևով խաղալ....

Ասում են որ ներկայացումը բարեգործական նպատակով էր, բայց ինչի՞ աֆիշայի վրա ոչինչ ասված չէր,—այդ ինձ յայտնի չէ։

Շտապում եմ փակել նամակը և ուղարկել նրան փօստատուն։ Մի կէս ժամից յետոյ սկսվելու է քաղաքագլխի ընտրութիւնը. իսկոյն գընում եմ Դումա։ Ընտրութեան հետևանքների մասին կը գրեմ։

—

Դեկտեմբերի 28

Երէկ ժամը 12-ին հաւաքվեցաւ Քութայիսի Դուման նոր քաղաքագլուխ ընտրելու դիտաւորութեամբ։ Ներկայ էին 47 ձայնաւորներ։ Քաղաքագլուխ իշխ. Աբաշիձէ յայտնեց որ տէրութիւնը առաջարկում է ընտրել նոր քաղաքագլուխ։ Իսկոյն սկսվեցան տոմսակներով առաջարկութիւններ, առանց որ և է վիճաբանութեան։ Տոմսակներով ստացան՝ Լ. Աստաֆանի 33 ձայն, Մաչավարիանի 3 ձայն, և այժմեան քաղաքագլուխ Աբաշիձէ 10 ձայն։ Աստաֆանի այստեղի նահանգական դատարանի անդամ է, Մաչավարեանի նոյնպէս մի ծառայող է։ Նախագահը առաջարկեց քուէարկել Աստաֆանի և Մաչավարեանի կանդիդատներին, իսկ ինքն հրաժարվեց քուէարկութենից։

Այն ժամանակ սկսվեցան վիճաբանութիւններ։ Աղմուկը աննկարագրելի էր. ամենքը միասին էին խօսում։ Ես կարծում էի որ վէճը մուշտակուով կը վերջանայ։ Պ. Նիկոլաձէ, «Обзоръ» լրագրի խմբագիրը, որ այստեղ էլ ձայնաւոր է, առաջարկեց չը քուէարկել Մաչավարիանիին, որովհետև նա իրան մասնաւոր կերպով յայտնեց թէ չէ կամենում քուէարկվել։ Մաչավարիանի բացակայ լինելով, ոչ ոք չը մտածեց ուղարկել նրա մօտ հարցնելու համար, արդեօք կամենում է քուէարկվել, թէ ոչ. վերջապէս նրա համաձայնութիւնը կարող էին առաջուց ստանալ։ Վճռվեցաւ միայն Աստաֆանիին ենթարկել քուէարկութեանը։ Այն ժամանակ Նիկոլաձէ կրկին վեր է կենում և պահանջում է որ Աստաֆանի հաստատ խօսք տար, որ բացի հիւանդութեան պատճառով չի հեռանայ տարվայ մէջտեղ իր պաշտօնից։ Եթէ մենք նրան ընտրենք, ասաց Նիկոլաձէ, և նա հեռանայ ժամանակաւորապէս, յանձնելով քաղաքային գործերի վարելը մեր Ուպրավայի անընդունակ անդամներին, այն ժամանակ նոյն բան կը պատահի, ինչ որ մի անգամ պատահեց Թիֆլիսում, երբ իշխ. Թումանով հեռացաւ և յանձնեց քաղաքը պ. Էյիմիրզովի պէս մարդուն, որի պաշտօնավարութեան ժամանակ քաղաքը շատ անմխիթար դրութեան էր հասցրած։ Պ. Նիկոլաձէի խօսքերը կրկին աղմուկ յարուցին. կատարեալ բաբիլոնեան խառնակութիւն էր։ Զը նայելով այդ խառնակութեանը, Աստաֆանի կարողացաւ արտասանել մի քանի խօսքեր վրացերէն լեզուով, որոնցով յայտնում էր իր համաձայնութիւնը։

Այդպիսով Աստաֆանի մէնակ ենթարկվեցաւ քուէարկութեանը և ստացաւ 42 ընտրողական ձայներ։

Մնացած հինգ ձայնից կարծեմ երեք ձայն սև քուէ էին տուել, երկուսն էլ հրաժարվեցան քուէարկութեան մէջ մասնակցելուց։

Մի բան միայն լաւ տպաւորութիւն ունեցաւ ինձ վրա. այն ձայնաւորները, որոնք չեն տիրապետում ռուսաց լեզուն, նիստի մէջ վրացերէն էին խօսում։ Ինքն նախագահն էլ իր մտքերը ժողովին բացատրելու համար, շատ անգամ դիմում էր ձայնաւորներին վրաց լեզուով։

Գրիգոր Արծրունի

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

13 դեկտեմբերի

Բագուի մասին ուրիշ անգամներ մանրամասն կը գրեմ, բայց այժմ մտադիր եմ մի երկու խօսք ասել նորա ազգային գործունէութեան մասին։ Այդ գործունէութեան գլխաւոր արգասիքը ինչպէս ձեզ յայտնի է արտայայտվում է «Մարդասիրական Ընկերութեան» միջոցով։ Ընդհանուրի կարծիքն է որ բագուեցիք միշտ միաբան են գործել մինչև այս վերջին տարի ու կէսն, երբ բաժանման սերմն ընկաւ մէջերը։ Ես ճշմարիտն ասեմ չեմ հաւատում այդ կարծիքին, ասելով այսպէս. ինչպէս կարելի է որ մի, կամ մի քանի անձինք կարողանան ամբողջ հասարակութիւնը խառնել այնպէս, որ անմիաբանութիւնը դրանց մէջ արմատ առնէ։ Շարունակում էք մտածել. եթէ անմիաբան են, ուրեմն արմատն իրանցից է և այստեղ կողմնական անձն միայն երկրորդական դեր է խաղացել։

Ըստ առաջին երևոյթին արդարև շատերը սառել են, շատերը վշտացել և այդ պատճառով գործից փոքր ինչ հեռացել։ Բայց երբ աւելի մօտ ես քննում դրանց շարժառիթները, տեսնում ես որ դրանք խորն արմատ չեն թողած և ահա ինչո՞ւ։ Այստեղի ընտրեալները, իշխանները զբաղված են, ոչ թէ Երևանի, Գանձակի մինչև անգամ Թիֆլիսի գործիչների պէս, այլ իսկապէս նրանց ժամերը իրանց գործի համար այնքան թանգ են, որ միջոց չունեն բամբասելով միայն զբաղել։ Բամբասանքը ես կարծեմ մեր ամեն քաղաքներում ծագած աղմուկների գլխաւոր աղբիւրն է։ Սովորաբար մեզանում ոչ թէ վարժապետի դատաստութիւնը կամ տեսչի կառավարութիւնը նիւթ է փողոցային խօսակցութեանց, այլ նաև տեսչի կամ ուսուցչի հանդերձը, մանգալը, ուտելն և խմելը, մի խօսքով ամեն բան ինչ որ սովորական է ուրիշ մարդիկների համար, ուսուցչի մէջ քննութեան և վիճաբանութեան նիւթ է։ Ինչպէս ասացի բագուեցիք ժամանակ չունենալու պատճառով բամբասանքից, համեմատաբար ուրիշ քաղաքներից, աւելի ազատ են, ուրեմն դպրոցների վերաբերութեամբ մշտական տարաձայնութիւն չէ կարող տիրել։ Կարելի է հարցնէք՝ ապա ինչպէս եղաւ այս մօտ երկու տարին։ Իմ կարծիքով դա այսպէս կարող էր լինել՝ երբ մի անձն կամ մի քանի անձինք բամբասող են և մի և նոյն ժամանակ պարապ ժամեր շատ ունեն, ահա դրանք սորա մօտ բամբասում են միւսի վրա, նորա մօտ սորա վրա,—երկուսի մօտ 3-դի վրա և որովհետև այդ բամբասվողները այնքան միջոց չեն ունենում որ իրար հետ այդ նիւթի վրա շատ անգամ խօսեն, որպէս զի պատճառն հասկացուի, այլ իրարից վշտանում են, աշխատում են իրար քիչ պատահել, պատահելիս սառնութեամբ խօսել, այդպիսով նիւթն առաւել երկար ժամանակ չէ պարզվում, այդպիսով առաջ է գալիս սառնութիւն։ Ոմանք չուտ հասկանում են պատճառը, ոմանք աւելի ուշ, բայց երբ մեծամասնութիւնը հասկանում է, շարժառիթն անհետացնում են։ Բայց շատերը դեռ ևս մնում են այդպիսի վշտացած կամ քաշված դրութեան մէջ, դրա վրա ևս աւելացրէք նամակագրերի յարձակմունքը, որոնց փոխանակ պատասխանելու, աւելի լաւ են համարում դորից յետ քաշվել, քան թէ իրանց անունը խոսակցութեան և լրագրութեան նիւթ չինել։

Զարմանալի չէ որ այսպիսի հանգամանքներում առանձին կերպով սպասվում է ընկերութեան ընդհանուր ժողովը, որ տեղի է ունենալու յառաջիկայ յունվարին։ Ոմանք կամենում են հեռանալ, ուրիշները մնալ, ոմանք սպասում են մի քանի փոփոխութիւնների, այլք կամենում են մի քանի վէճերի որոշուելն։ Մի խօսքով ամենքը քաշված, սպասում են այդ ընդհանուր ժողովին և ամեն մի անդամ սպասում է, որ այդ ժողովը

կիրագործէ իր ցանկութիւնները։ Բայց նախ քան այդ ժողովի կայանալն ցանկալի կը լինէր, որ անդամները փոխանակ միմեանցից քաշվելու և իրանց անձը հեռու պահելու հանդիպէին իրար։ Այն ժամանակ կը պարզվէր նրանց տարաձայնութեան պատճառը և ես հաւատացած եմ, որ մեծամասնութիւնը կիմանար որ այդպիսի չընչին բաների զոհել մեծ հասարակական գործը իրանց վայել չէ և իրանք աւելի եռանդով կըսկսէին այն գործը, որ այսքան տարի գովութեան արժանի կերպով տարել են։

Ուրախալի է այն երևոյթն որ նկատվում էր նոյն իսկ խորհրդական անդամների մէջ, որ ընկերութեան բոլոր ոյժը մի տեղ ժողովել որպէս զի նրանցից ակներև մի պտուղ ստացուի։ Այդ նպատակով կամենում են Բագուի երկաթ դրպրոցաց առաւել ոյժ տալ և նրանց փոքր ինչ մոտեցնել այն աստիճանին որ պատշաճ է Բագուի պէս քաղաքին։ Ուրեմն մենք ևս այլոց պէս յոյսով սպասենք այդ ընդհանուր ժողովին բոլորովին հաւատացած լինելով, որ բագուեցոց շատերի մոտ այնքան ազգայնութեան ոգի կը գտնուէ, որ չնչին բաների համար ընկերութեան գործերը բարձի թող չեն անի և իրանց օգտաւէտ ծառայութիւնը այդպիսի հիմարկութեան համար չեն խնայի։

Ն. Ն.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

«Մշակի» եկող 1879 թ. առաջին համարը կը հրատարակենք յունվարի 16-ին։ Մինչև այդ օրը մենք կիմանանք մոտաւորապէս թէ ինչքան բաժանորդ ենք ունենալու, որ նրա համեմատ տպենք լրագրի օրինակների քանակութիւնը։ Բոլոր ժամանակ, բացի կիրակի օրերից, խմբագրութիւնը բաց կը լինի և ստորագրութիւն կընդունվի առաւօտեան 10-2 ժամը կէս օրից յետոյ։

—

Մեզանից անկախ պատճառներով «Մշակի» երէկվայ համարը չը կարողացանք հրատարակել։

—

ՔՈՒԹԱՅԻՍԻՑ մեր սեփական թղթակցից ստացանք հեռագիր Լ. Ի. Աստիանի Քութայիսի քաղաքագլուխ ընտրվելու մասին։ Հեռագիրը չը կարողացանք տպել, որովհետև նա ուշացաւ։ Լ. Ի. Աստիանի ընտրվել է 42 ձայների բազմութեամբ։

—

Լսում ենք, որ եկող տարվայ յունվարի սկզբին լինելու է ԹԻՖԼԻՍԻ քաղաքագլխի ընտրութիւնը։ Այդ պաշտօնի համար առաջարկում են մի քանի անձանց, որոնց անունների յիշելը աւելորդ ենք համարում։ Մեր կողմից արդէն առաջարկել ենք կանդիդատ քաղաքագլխի պաշտօնի համար («Մշակ» № 221) ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍՏԵՓԱՆԵԱՆ ԽԱՏԻՍԵԱՆԻՆ։

—

Մեզ հաղորդում են, որ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ բժշկական կուրսերում գտնվում է միակ հայ օրիորդ Տէր-Գրիգորեանց, որ Գայանեան դպրոցի աշակերտուհի է եղել։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ մեզ գրում են. «Տեղիս հայ հասարակութիւնը պատրաստվում է յարգելու գեներալ-ադիւտանտ Լազարեանցին մի փառաւոր հացկերոյթով, որը ինչպէս ասում են, նշանակված է դեկտ. 26-ին։ Մի և նոյն օրը ուսանողները ներկայացնելու են պ. Սունդուկեանցի «Պէպո»։

—

ԹԻՖԼԻՍԻ գործակալների ընկերութեան նախանդամների խորհուրդը խնդրում է ընկերութեան անդամներին, կամ անդամ դրվել ցանկացողներին կիրակի դեկտ. 31-ին առաւօտեան 10 ժամին չնորհ քերել քաղաքային դումայի դահլիճը։ Այդ ժողովի ժամանակ կը քննվի ընկերութեան համար բնակարան վարձելու խնդիրը։

—

ՆԵՐՔԻՆ-ԱԳՈՒԼԻՍԻՑ մեզ հաղորդում են, որ գիւղացիք մտադիր են դիմել մարմնաւոր իշխանութեանը իրանց և հոգևոր կառավարութեան մէջ ծագած անբաւականութեան մասին։ Իսկ Վերին-Ագուլիսի բնակիչները մտադիր են խնդիրք ուղարկել Վեհ. Կաթողիկոսին։ Նամակագրի կարծիքով ներքին-ագուլեցիների դիտաւորութիւնը լաւ չէ։

—

Մեզ գրում են ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ, որ եկող 1879 թուին ճեմարանի մէջ ստանալու են հայ պարբերական հրատարակութիւնները։ Մինչև այժմ ոչ թէ միայն աշակերտներին, այլ և ուսուցիչներին արգելված էր լրագիր ստանալ։

—

Հարկաւոր ենք համարում յիշեցնել, որ եկող 1879 թուին գաւառներում «Մշակին» բաժանորդագրվողները պէտք է բաժանորդագնի հետ ուղարկեն մի հատ 8 կոպեկանոց մարկա ապահովագիր ստանալու համար։

—

Մեզ գրում են ՂՈՒԲԱՅԻՑ հետևեալը. «Դեկտեմբերի 12-ին, գիշերվայ 9 ժամին Գուսարի անուանված զօրատեղիի մէջ հրդեհ է ընկնում։ Մի կողմից քամին միւս կողմից փայտեա շինութիւնները նպաստել են հրդեհի տարածվելուն։ Երկու ժամվայ ընթացքում այրվում են մոտ 70 տներ։ Վնասը նշանաւոր է։ Գլխաւորապէս վնասվել են հայ վաճառականները։ Վաճառականների ապրանքը մասամբ գողացել են, մասամբ փչացրել։

—

Մեր անցեալ համարներից մէկի մէջ յայտնել էինք, որ Կ. Պոլսի ազգային ժողովի անդամ արժանապատիւ հայր Ամբրոսիոս վարդապետ Ռուբինեան ուղևորվեցաւ Ս. Էջմիածին Նորին Վեհափառութենից թոյլատուութիւն խնդրելու եկեղեցիներում քարոզելու և իր ունեցած մասնաւոր Ռուբինեան ուսումնարանի համար նուիրատուութիւններ հաւաքելու համար։ Արժանապատիւ հայր Ամբրոսիոսը այդ թոյլատուութիւնը արդէն ստացել է Վեհ. Կաթողիկոսից և վերադառնալով Թիֆլիս սկսել է իր քարոզների կարգալը մեր եկեղեցիներում։ Արժանապատիւ հայրը արդէն քարոզել է սուրբ Գէորգ և Զգրաչէնի եկեղեցիներում, իսկ եկող կիրակի դեկտեմբերի 31-ին կը կարդայ Վանք եկեղեցում։

—

Ստացանք ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԼԻՍԻՑ Տէր-Միքայելեանց Միքայել եղբայրներից 60 բուբլ յօգուտ «Արարատեան ընկերութեան»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՅԻՑ

—

Բերլին 28/12. 78.

Մի քանի օր Բերլինի մտաւոր շրջանները մեծ սուգի մէջ էին։ Ամերիկայի Միացեալ Նահանգների այստեղի դեսպանը, պ. Բէյարդ Տէյլօր (Bayard Taylor) յանկարծակի վախճանվեցաւ։ Հանգուցեալը շատ մեծ պատիւ էր վայելում ոչ միայն այստեղի մտաւոր շրջաններումը, այլ և ամբողջ Գերմանիայի մէջ յայտնի մարդ էր։ Լսես քան այս պաշտօնը ընդունել, որ ունէր իր մահից առաջ, նա երկար տարիներ կացել է Գերմանիայի մէջ և նորա ամուսինը մի գերմանուհի է։

Չը գիտեմ որքան նշանաւոր էր պ. Տէյլօր իբրև դիպլոմատ, բայց նորա գլխաւոր նշանակութիւնն էր անկասկած նորա անխոնջ աշխատանքները գրականութեան ասպարիզի վրա։ Նա մանաւանդ յայտնի էր իր հայրենիքի մէջ իբրև մի ջերմեռանդ պաշտպան գերմանական կեանքի և գերմանական պատմութեան և գրականութեան։ Նորա գրվածներից մինը «Գերմանիայի պատմութիւն» իբրև դասագիրք ընդունված է Միացեալ Նահանգների մէջ, իսկ գլխաւորապէս նա զբաղվում էր Գէօթէի գրվածներով, որոնցից շատերը թարգմանեց անգլիերէն. նորա «Ֆաուստի» թարգմանութիւնը համարվում է յաջողվածներից մէկ և առհասարակ նրա Գէօթէի մասին արած հետազօտութիւնները այնքան նշանաւոր են որ նրան համարում էին գրական շրջանների մէջ «Գէօթէ—ճանաչողների» թուումը։

Վերջին ժամանակները պ. Տէյլօր զբաղված էր Գէօթէի մի կենսագրութիւնով, որ չուտով պիտի լոյս տեսնէր և որի մէջ պիտի ամփոփվէին նորա տարիներով շարունակված աշխատութիւնները գերմանական հանճարաւոր բանաստեղծի մասին։ Ցուղարկաւորութեան ժամանակ ներկայ էին քաղաքիս ամենաբարձր շրջանները. Կայսրը և թագաժառանգը իրանց կողմից տեղապահներ ուղարկեցին, բայց մանաւանդ բազմաթիւ էին լրագրութեան ներկայացուցիչները, որոնցից մինը, յայտնի վիպասան Բէրթօլդ Աուէրբախ մի սրտաշարժ ճառ խօսեց հանգուցեալի գրական նշանակութեան մասին։ Պ. Տէյլօրի ընտանիքը դիտաւորութիւն ունի նորա մարմինը Ամերիկա տանելու, հայրենի հողի մէջ թաղելու համար։

Այս օրվայ նամակով դիտաւորութիւն ունենալով միայն մի քանի տուրեր հաղորդելու ձեզ, կը խնդրեմ չը զարմանաք եթէ պիտի անկապ լինի։

Նորերումս մի անցք, որ պատահել է Վիւրցբուրգ բաւարական քաղաքի մէջ այնտեղի համալսարանի մի ուսանողի դեմ, շատ զբաղեցնում էր վերջին օրերը բոլոր տպագիրները։

Երկու բարեկամ ուսանողներ երևի փոքր ինչ աւելի գարեջուր խմելուց յետոյ, երեկոյեան (17-ին ամսիս) վերադառնում էին տունը։ Նրանցից մինը պ. Զիկկէն (Sicken) միւսը դիտաւորութիւն ունենալով դէպի տուն ճանապարհ ընկնելու վերջին գիշերը իր ընկերոջ մոտ պիտի անցկացնէր։ Անցնելով զօրանոցի առաջ, երիտասարդը մտաւ մէջ և պահապան զինուորականներից գարեջուր խնդրեց—մի սովորութիւն որ մանաւանդ Բավարիայի մէջ շատ տարածված է, ուր գարեջուր մի մեծ դեր է խաղում—բայց պահապանը մերժեց խնդիրքը կատարելու։ Այդ առիթ եղաւ որ երիտասարդները և զինուորականները վիճել սկսեցին և վերջը պ. Զիկկէն ձերբակալվեցաւ։ Բայց նա այդ բոլոր անցքը ծաղր համարելով, երբ նրան պիտի տանէին հաւատվախտը, ուզեցաւ փախչել։ Ունտերօֆիցերը որ առաջնորդում էր զինուորների գընդին առանց զգուշացնելու փախչողին և առանց փորձ անելու նորան կանգնեցնելու կամ բռնելու, առանց սովորական «Halt» կանչելու, հրաման տուեց հրացաններ արձակել—և ուսանողը ընկաւ սպանված։ Ամբողջ Վիւրցբուրգ քաղաքը և մանաւանդ համալսարանը սարսափելի վրդովմունքի մէջ էր գտնվում. ուսանողները ժողով հաւաքեցին ուր ներկայ էին գտնվում 800 ուսանող և շատ պրոֆէսորներ։ Ամեն կողմից պահանջում էին որ ունտերօֆիցերը պատժվի, բայց ինչպէս երևում է զինուորական վարչութիւնը ցանկութիւն չունի ենթարկվել ուսանողների պահանջներին և մինչև այժմ գործը մնում է անվճիռ։ Անհասկանալի վայրենութիւնը այն էլ էր, որ երբ Զիկկէն սպանվեցաւ և նրա ընկերը, (որ նրան մենակ թողնել չուզելով սկզբից հետևում էր նրան և զինուորներին) մէջ ընկաւ, որ եթէ կարելի է օգնի իր ընկերոջ, կրկին ունտէր-օֆիցերի ձայն լսվեցաւ, որ հրամայել էր ուզում և սրա վրա հրացան արձակել։ Երիտասարդը դժուարութեամբ կարողացաւ հասկացնել, որ նա բժիշկ է և ուզում է օգնել իր ընկերոջ, եթէ նա միայն վիրաւորված է—բայց մոտենալով նա ճանաչեց, որ նա էլ չէր շնչում։ Դիակը մնաց 1½ ժամ տեղի վրա և միայն զօրանից յետոյ տարվեցաւ հիւանդանոց։—Հեռագիրը հաղորդեց որ ուսանողների և օֆիցերների մէջ շատ լարված յարաբերութիւններ ծագեցան այդ անցքից յետոյ և որ բազմաթիւ մենամարտութիւնների հրաւէրներ ուղարկվեցան, բայց յետոյ մի քանի լրագիրներ ուզեցան այդ լուրը հերքել, պատմելով որ օֆիցէրների հասարակութիւնը մինչև անգամ խմբովին ստորագրած մի նամակ ուղարկեց ուսանողութեանը իր ցաւակցութիւն յայտնելով այդ թշուառ անցքի և նրանց ընկերի սպանման առիթով։ Ցանկալի կը լինէր ի հարկէ որ ունտէրօֆիցերի ինքնակամ վարմունքը անպատիժ չը մնար, որ պ. պ. զօրականներն էլ աւելի չը համոզվէին, որ իրանք ամենակարող են և որ հասարակութեան բոլոր դասերը նրանց կամայականութեան պիտի հպատակվեն։

Մի անցք, որ նմանապէս մի քանի օր առաջ պատահել է Դրէզդէն քաղաքի մէջ մի նոր ապացոյց է որպէսի ֆանատիկոսութեան հասնում են կուսակցութիւններ կամ աւելի լաւ է ասել մի քանի մարդիկ իրանց սեփական կուսակիցների վերաբերութեամբ։ Ամբոխի մարդիկ շատ անգամ չը հասկանալով իրանց առաջնորդների ուղղութիւնը կամ աստուածացնում են նրանց կամ հետևեալ բոպէի մէջ պատրաստեն նրանց ցեխի մէջ ձգել, ոտնակոխ անել, կամ ինչպէս մի բարեկամս ճիշտ էր ասում. «անկիրթ մարդիկ հեթանոսների յատկութիւն ունին որ մի բոպէ երկրպագում են իրանց կուռքերին իսկ միւս բոպէ նրանց ջարդում են.» Դրէզդէնի անցք դրա համար ապացոյց է։ Սօցիա—դէմօկրատների յայտնի գլուխներից մինի պ. Բէբէլ, բայխոտագի անդամի անունով այս օրերս մի բաց նամակ փոստի վարչութիւնից ձերբակալվեցաւ, որովհետև անանուն ուղարկողը սպառնում էր նրան սպանել, եթէ նա չը փախչի Գերմանիայից, նրան անուանելով դավաճան ընդհանուր գործի և ծաղրելով նրան ասելով, թէ այն մարդ որ անչարժ կայք ունի (պ. Բէբէլ մի տուն ունի յիշված քաղաքում) ի հարկէ ցանկութիւն չի ունենայ «բաժանել»։ Նամակը վերջանում էր հետևեալ խօսքերով «ընտրեցէք երկուսից մինը կամ փախուստ հայրենիքից, կամ մահ իմ կամ իմ բազմաթիւ ընկերների դանակից։» Ստորագրութիւնն էր «մի սօցիալ-դէմօկրատ։» Ոստիկանութիւնը, որին յանձնվեցաւ փոստի վարչութիւնից այս նամակը, 200 մարկ վարձատրութիւն խոստացաւ նրան, ով որ կը գտնի նամակ գրողին, որովհետև իր պարտաւորութիւն համարում է հոգալ ամեն քաղաքացու անձնական ապահովութեան մասին։

Ա. Արծրունի

«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—

—ԽԱՐԿՕՎ. Ռ. Կ. Այդ անցքի մասին չենք արող տպել, ի զուր մի ուղարկէք։

—ՆԵՐՔԻՆ-ԱԳՈՒԼԻՍ. **. Նամակը քահանայի մասին մեզանից անկախ պատճառով չը կարողացանք տպել։

ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԼԻՍ. Մելիքզադէ. Ձեր յօդուածները կը մնան եկող տարվայ համար։ Մանրամասնները կը գտնէք նամակի մէջ, որ չուտով կուղարկենք ձեզ։

ԷՋՄԻԱԾԻՆ. Պատմեցէք այդ առասպելները ումը կամենաք, իսկ մենք դրանց չենք հաւատում։

—ԱՍՏՐԱԽԱՆ, Պ. «Մշակ» կուղարկենք երկու բաժանորդներին, կ ապահովագիրները բաժանորդագնի ստանալուց առաջ չենք ուղարկում։ Գրեմիաները ստանալիք այն բաժանորդները, որոնք «Մշակի» տարեկան գինը վճարած կը լինեն և ապահովագիր կունենան։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Կ. ՊՕԼԻՍ, 26 դեկտեմբերի։ Ռուսաստանի և Թիւրքիայի մէջ առանց արգելքների հանդիպելու շարունակվում են բանակցութիւնները վերջնական խաղաղական դաշնագիր կապելու համար։

ԿԱԼԿԱԹԱ, 27 դեկտեմբերի։ Բելուջիստանի մի քանի ցեղերի առաջնորդները առաջարկեցին անգլեացիներին հազար ձիաւորներ ծառայութեան համար։

ԳԵՐԱ, 27 դեկտեմբերի։ Խամիլ-խան և բրիտանական զօրքերը Սուլէյմանդաղի մէջ յարձակվեցան ասպատակող զօրքերի վրա և նրանցից 70 մարդ սպանեցին։ Բրիտանական զօրքերի կորուստները անչնչան են։ Այս նշանաւոր գործի պատճառով սահմանի վրա հանգստութիւն կը տիրէ։

Կ. ՊՕԼԻՍ, 27 դեկտեմբերի։ Կիամիլ—փաշա և Ալի—բէյ ուղևորվեցին Սկուտարի։ Նրանց հրահանգներ են տուած Չերնոգորիայի տիրապետութեանը ընդդիմադրող մահմեդականներին առաջարկել, որ Թիւրքիա գաղթեն։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 28 դեկտեմբերի։ Պետական բանկի 5% տոմակը առաջին շրջանի արժէ 95 ր. 50 կ., երկրորդ 94 ր. 75 կ., երրորդ 94 ր. 75 կ., չորրորդ 94 ր. 75 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմակը արժէ 237 ր. 55 կ., երկրորդ 233 ր. 75 կ., արևելեան առաջին փոխառութեան 93 ր. 75., երկրորդ 92 ր., ոսկի 8 ր. 33 կ.։ Ռուսաց 1 բուբլ Լօնդօնի վրա արժէ 23¾ պէնս, ռուսաց 100 բուբլ Գերմանիայի վրա 202 մարկ, Փարիզի վրա 249 Ֆր. 50 սանտիմ։ Տրամադրութիւնը հանդիստ է։

ԿԱԼԿԱԹԱ, 26 դեկտեմբերի։ Հիլայ ցեղի առաջնորդները թշնամաբար են վարվում։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 29 դեկտեմբերի։ Մինիստրը Վալուեվ հիւանդացաւ սաստիկ քաղցի ջերմով։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 29 դեկտեմբերի։ Պետական բանկի 5% տոմակը առաջին շրջանի արժէ 95 ր. 75 կ., երկրորդ 94 ր. 50 կ., երրորդ 94 ր. 50 կ., չորրորդ 95 ր., ներքին 5% առաջին փոխառութեան տոմակը արժէ 237 ր., երկրորդ 233 ր., արևելեան առաջին փոխառութեան տոմակը 94 ր., երկրորդ 91 ր. 75 կ., ոսկին 8 ր. 38 կ.։ Ռուսաց 1 բուբլ Լօնդօնի վրա արժէ 21,62 պէնս։ Տրամադրութիւնը թոյլ է։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՔԱՐԱԾՈՒԽ „ՌՈՒՍԱՍՏԱՆ“ ՀԱՒՏԻ

(ՀԱՆՔԻՑ), ՈՐ ԳՏՆՎՈՒՄ Է ԶԷԼԼՕԲԱՆԻ ԱՐՈՒԱՐՁԱՆԻ ԿՈՒՐՍԷՔԱ ԳԻՒՂԻՄ

ԸՆԿ. ՆԷՅՄԸՆ—ՀԷՆԻՆԳ

Ծախվում է ՇԷՆԻՆԳԻ ՊԱՎԻԼԻՕՆՈՒՄ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ՄԻԱՍԻՆ ԱՄՈՂՋ ՎԱԳՕՆՆԵՐՈՎ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ԿԱՅԱՐԱՆԻՑ ՊՈՒԴԸ 25 ԿՕՊ., ԻՍԿ ՓՈՔՐ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԿԱՐԵԼԻ Է ԳՆԵԼ ՔԱԼԱՔԻ ՄԷՋ ԳՏՆՎՈՂ ՊԱՀԵՍՏԻՑ ՊՈՒԴԸ 28 ԿՕՊԷԿՈՎ։

ДѢВИЦА ищетъ мѣсто КОМПАНІОНКИ или ГУВЕРНАНТКИ. Адресъ: Старокатолическая улица, домъ Чиковани № 10

ՄԷԿ ՕՐԻՈՐԴ ցանկանում է ընկերակցուհու կամ ՏՆԱՑԻՆ ՎԱՐԺՈՒՀՈՒ պաշտօն ունենալ։ Հասցէն, Սատրօկատօլիչեսկայա փողոց, տուն Չիկօվանի, № 10

Декабря 17-го, вечеромъ, въ Нѣмецкомъ клубѣ у ОДНОЙ ОСОБЫ потеряны золотые часы подъ № 103,148.

Подъ одной КРЫШЕЮ часовъ находится фотографическая КАРТОЧКА ребенка. Кто найдетъ часы, получитъ 50 руб. ВОЗНАГРОЖДЕНІЕ.

Адресъ спросить въ редакціи газеты „Мшакъ“.

5—5



Ծննդեան տօներին Ֆրանսիական ցիրկի մօտ գտնվող ՀԱՄԵՐԽԱՐՀԱՅԻՆ ՀԱՆԴԻՍԻ *բաղադանում կը լինի պատկերների* ԵՐԿՐՈՐԴ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ։ *Իմիջի այլոց ցոյց կը տրվեն՝* ԵՐՈՒՍԱՂԷՄ *քաղաքի պատկերը, ՔՐԻՍՏՈՍԻ ԾՆՈՒՆԴԸ Բեթղեհեմում։ Զինուորական պատկերներից կը լինի՝ Ղարսի պաշարումն և վերցնելը։* ՆԱՐՈՒԹԻՒՆ։ *Մագիական զարմացք։ Ով որ կը տեսնի, կը ծիծաղի։*

ՏԷՐ-ՆԻԿՕՂՈՍՈՎԻ *խանութում, Կատօլիչեսկայա փողոցի անկիւնում, Շիօեվի տան հանդէպ* ՍՏԱՑՎԱԾ ԵՆ *տօների համար* ՄԵԾ *քանակութեամբ ամենագեղեցիկ* ՆՈՐ *ձևերի* ԲՐԻԼԻԱՆՏԻ, ԱՐԾԱԹԷ *և* ՈՍԿԵԱՑ *իրեղէններ, նոյնպէս* ԺԵՆԵՎԱՑԻ ԺԱՄԱՑՈՑՑՆԵՐ։ *Իսկ այդ խանութի կարգում* ՍՏԱՑՎԱԾ Է Կ. Ս. *Պօլովի Թեյից 5000 ֆունտ։ Թէյի ֆունտը արժէ 1 ր. 40—3 ր.։ Վաճառականներին զիջումն կանվի։*

4—4

ԳՐԻԳՈՐ ՆԱՍԻՐԵՆՑԻ ՊԱՏՐԱՍՏԻ ՀԱՅԻՈՍՏՆԵՐԻ ԽԱՆՈՒԹՈՒՄ ԵՐԵՒԱՆԻ ՀՐԱՊԱՐԱԿԻ ՎՐԱ

ստացվել են մեծ քանակութեամբ ՖՐԱԿԻ ԵՒ ՏՐԻԿՕԻ ՍԻԼԻՏԻԿՆԵՐԻ ՇՈՐՆԵՐ, *որսորդական* ԱՌԱՒՕՏԵԱՆ ԺՕԿԵՏՆԵՐ, *ձմեռային* ՊԱԼՏՕՆՆԵՐ *և* ՎԱՐՏԻԿՆԵՐ, *երեխայոց հագուստներ,* ՎԵՐԱՐԿՈՒ—ԹԱԼԱՏՆԵՐ *զարդերով, նոյնպէս ընդունվում են* ՊԱՏՈՒԷՐՆԵՐ *զինուորական և քաղաքական հագուստների համար։ Ցոյս ունիմ, որ ինչպէս պատուիրողները նոյնպէս է գնողները* ԲԱՒԱԿԱՆ ԿԸ ՄՆԱՆ։

24—75

«ՄՇԱԿԻ» ԽՄԲԱԳՐԱՏՆԸ *հարկաւոր է մէկ* ԼՐԱԳԻՐ ՏԱՐԱԾՈՂ։ *Պայմանների մասին կարելի է տեղեկանալ* ԱՄԵՆ ՕՐ *առաւօտեան ժամի* 10-*ից մինչև* 2 *ժամը կէսօրից յետոյ։*

ВЪ РЕДАКЦІИ «МШАКЪ» НУЖЕНЪ РАЗНОЩИКЪ.

Մի գաղեցի ԴԱՂԻԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ *զաստուրութեան մէջ քսան տարվայ փորձ ունեցող, կամենում է պարապել այդ լեզուի* ԴԱՍԱՏՈՒՈՒԹԵԱՄԲ։ *Հարցնել պ. Ալբերի մագազինում, Ալէքսանդրեան այգու դէմ, Գոլովինսկի պրոսպէկտի վրա։*

5—5

ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ *ընդունվում է ստորագրութիւն Կ. Պօլսի «Մասիս լրագրին։ Տարեկան գինն է Ռուսաստանում քսան ռուբլի։ Վճարը կանխիկ։ Ստորագրվել ցանկացողներին խնդրում ենք օր առաջ յայտնել իրանց ցանկութիւնը և որոշ հարցրել իրանց բնակութեան տեղն և հասցէն։*

ՆՈՅՆ ՏԵՂԸ

վաճառվել սկսաւ Եղիշէի Վարդանանց պատմութիւնը Անձեւացեաց օրինակից տպագրված ընդ վերոհայեցողութեամբ Գ. Սրբազ. Այվազեանի։

Գինը ընտիր թղթի վրա . . . . . 1 ր.

Հասարակ թղթի վրա . . . . . 80 կ.

Գումարով գնողներին 20% զիջումն կը լինի։

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԿԱՆ ՀԱՆԴԻՍ

որ գտնվում էր Գոլովինսկի պրոսպէկտի վրա Սարաջևի տանը, այժմ գտնվում է նոյն Գոլովինսկի պրոսպէկտի վրա, Շիօեվի տանը, Գերմանական կլուբի և Վէսլիի Ֆոտոգրաֆիայի մօտ մի և նոյն սանդուղքով։ Այցելողների համար բաց է ԱՄԵՆ ՕՐ *առաւօտեան 9 ժամից մինչև երեկոյեան 5 ժամը։ Հաւաքածուին* ՆՈՐ ՆԿԱՐՆԵՐ *են աւելացրած։*

20—25

ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

Վաճառվում են, ի միջի այլոց, հետևեալ գրքերը՝

	Ր.	Կ.		Ր.	Կ.
1. Տիւզէնջեան՝ Տոմարագիտութիւն կազմ. 78 թ.	2	25	Ճանապ. ծախ.	2	60
2. Ծերենց՝ Թորոս Լևոնի, պատ. վէպ	1	„	—	1	20
3. Խուդաբաշեան բառգիրք հայերէնից ռուսերէն երկու հատոր, կազմած (սակաւաթիւ). . .	7	„	—	7	60
4. Ֆրանց Հոֆման՝ Ռընէ, վէպ.	—	40	—	„	50
5. Косовичъ Мет. Олендорфа для изученія французскаго языка 78 г.	3	„	—	3	40
6. Ахвердовъ Арменія въ V вѣкѣ	1	„	—	1	20
7. Т. Акоповъ современное Арм. общ. въ Оттоманской имперіи.	„	40	—	„	50

8. *Ստացված են բազմաթիւ հայերէն գրքեր, թէ ինքնուրոյն և թէ թարգմանական, Կ. Պօլսոյ և Զմիւռնիոյ տպագրութիւնք։*

9. *Շուտով կը սկսվի վաճառվել Եղիշէի Վարդանանց պատերազմի պատմութեան նոր տպագրութիւնը, ըստ Անձևացեացն օրինակի։ Տպագրութեանը բարեհաճեց հսկել Նորին Սրբազնութիւն Գաբրիէլ Արքեպիսկոպոս Այվազեանը. տպագրված է ամենայն զգուշութեամբ և ընտիր թղթի վրա։ Հասցէն՝*

Въ Центральную книжную торговлю. Въ Тифлисѣ.

ОБЪ ИЗДАНІИ ВЪ 1879 ГОДУ

ЛИТЕРАТУРНО-ПОЛИТИЧЕСКОЙ ГАЗЕТЫ

„ТИФЛИССКІЙ ВѢСТНИКЪ“

ГОДЪ СЕДЬМОЙ

Въ 1879 году *Тифлисскій Вѣстникъ* будетъ издаваться ежедневно, за исключеніемъ дней послѣпраздничныхъ, по прежней программѣ.

Подписка на 1879 годъ открыта и принимается въ конторѣ редакціи на Эриванской площади, № 3.

ПОДПИСНАЯ ЦѢНА:

	НА ГОДЪ.	НА ПОЛГОДА:
Въ Тифлисѣ, безъ доставки. . .	10 р.	5 р. 50 к.
» съ доставкой. . .	11 »	6 »
Съ пересылкой по Имперіи . .	12	6 » 50 »
За границу по почтовому союзу.	15	8 »

Иногородные адресуютъ свои требованія въ Тифлисъ въ редакцію *Тифлисскаго Вѣстника.*

ОБЪ ИЗДАНІИ ВЪ 1879 ГОДУ ВЪ БАКУ ГАЗЕТЫ

БАКИНСКІЯ ИЗВѢСТІЯ

ГОДЪ ЧЕТВЕРТЫЙ

Цѣна газеты на годъ въ Баку съ доставкой 5 р., на полгода—3 р., на три мѣсяца 1 р. 75 к., въ мѣсяцъ 75 к. Съ пересылкой во всѣ города имперіи на годъ 6 р. на полгода 3 р. 50 к., на три мѣсяца 2 р. на мѣсяцъ 90 к.

Подписка принимается въ Баку въ домѣ Дадашева, на Милютинской улицѣ близь гостинницы „Кавказъ“ и въ Бакинскомъ Обществѣ Взаимнаго Кредита.

Иногородные адресуютъ свои требованія исключительно: *Въ Баку, въ редакцію Бакинскихъ Извѣстій,*

„ТИФЛИССКІЯ ОБЪЯВЛЕНІЯ“

Въ 1879-мъ году будутъ издаваться по возможности въ улучшенномъ видѣ. Будетъ обращено особенное вниманіе на типографскую исправность и своевременную доставку. Форматъ по мѣрѣ накопленія матеріаловъ будетъ увеличиваться.

ПОДПИСНАЯ ЦѢНА.

	на годъ	на ½ года	на 3 мѣс.	на мѣс.
Въ Тифл. съ дост.	2	1р.—50к.	1р.	50 коп.
Иногороднымъ	4	2р. 50 к.	1р.—50к.	75 коп.

Подписка исключительно принимается въ конторѣ редакціи что въ Галереѣ Арцруни, на Дворцовой улицѣ.

Дозволено Цензурою 29 Декабря 1878 г. Тифлисъ Типографія Мартиросіанца Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Ր. Կ.
2 60
1 20

7 60
„ 50

3 40
1 20

„ 50
արգմանա-

թեան նոր
կել Նորին
ղղուշու-

ваться
хъ, по
ъ кон-

да:
0 к.

0 »

ь Тиф-

на три
шеріи на

ой улицѣ-
ита.
редакцію

видѣ. Бу-
евремен-
чиваться.

на мѣс-
50 коп-
75 коп.
Галереѣ

ՄՐՈՒՆԻ